Նոր Գեղիի երաժշտական դպրոց

Նոր Գեղիի երաժշտական դպրոցը հիմնադրվել է 1990թվականին։

Դպրոցի ստեղծման նպատակն էր գյուղի երեխաներին տալ երաժշտական կրթություն և զարգացնել նրանց ստեղծագործական կարողությունները։Սկզբում դպրոցում գործում էին միայն երաժշտական բաժիններ,որտեղ երեխաները սովորում էին տարբեր երաժշտական գործիքներ,երգեցողություն և երաժշտության տեսություն։

Ժամանակի ընթացքում դպրոցը զարգացավ,ավելացան նոր մասնագիտություններ և ուսուցման ուղղություններ։Այդ պատճառով Նոր Գեղիի երաժշտական դպրոցը վերանվանվեց արվեստի դպրոց։Այստեղ արդեն երեխաները հնարավորություն ստացան սովորելու ոչ միայն երաժշտություն այլև արվեստի այլ ճյուղեր։

Այսօր Նոր Գեղիի արվեստի դպրոցը կարևոր դեր ունի համայնքի մշակութային կյանքում՝ նպաստելով երեխաների ստեղծագործական զարգացմանը և կազմակերպելով տարբեր համերգներ ու մշակութային միջոցառումներ։